



ԱՍՏՆԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶՔԱՆՆԵՐԻ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՐԱՆ

ԹԻՎ

ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՔԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԱՌՈՂՋԱՊԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՐԿՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԶՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը (այսուհետև՝ վարչություն) մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանում է, որն իրագործում է մարզում բնակչության առողջապահության և սոցիալական ապահովության պետական ծրագրեր, իրականացնում է մարզի տարածքում առողջապահական և սոցիալական ապահովության խնդիրների հետ առնչվող մարզպետի հանձնարարականների ու որոշումների կատարումը, առողջապահության և սոցիալական ապահովության խնդիրների հետ կապված մարզպետի քննարկմանը ներկայացվող հարցերի նախապատրաստումը:

- Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ գործող օրենսդրությամբ, ՀՀ նախագահի հրամանագրերով, ՀՀ վարչապետի և կառավարության որոշումներով, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և սույն կանոնադրություններով:

- Վարչությունը համագործակցում է ՀՀ առողջապահության և ՀՀ սոցիալական ապահովության նախարարությունների, համակարգի հիմնարկների, կազմակերպությունների, առողջապահական և սոցիալական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

2. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- Մարզի տարածքում իրագործում է բնակչության պետական առողջապահության և սոցիալական ապահովության ծրագրերը, կազմակերպում է մարզային ենթակայության առողջապահական և սոցիալական ապահովության հաստատությունների կազմակերպությունների աշխատանքները:
- Առողջապահության ոլորտում իրագործում է մարզի բնակչության առողջական վիճակի ուսումնասիրություն, աշխատանքներ տանում է ի վանդությունների հաշմանդամության և մահացության նվազեցմանը, կյանքի տևողության

հետագա ավելացմանը ուղղված ՀՀ Առողջապահության նախարարության՝
մարզպետարանի կողմից մշակված ծրագրերի իրականացմանը:

Սոցիալական ապահովության ծրագրերի շրջանակներում իրականացնում է
մարզի տարածքում գործող սոցիալական ծառայությունների տարածքային
գործակալությունների (ՍԾՏԳ) աշխատանքների կազմակերպումը և
վերահսկումը:

- Աջակցում է պետական գործակալությունների սոցիալական ծրագրերի
ներդրման գործընթացներին, ապահովում է սոցիալական աջակցության կարիք
ունեցող ընտանիքների հաշվառումը և նրանց ընդգրկումը ընտանեկան նպաստի
համակարգում, ինչպես նաև իրականացնում է ստացված մարդասիրական
օգնությունների բաշխման աշխատանքները:

- Աջակցում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայու-
մարմինների մարզի բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների
բնակելի շենքերի, դպրոցների և օբյեկտների սանիտարական վիճակի
նկատմամբ վերահսկողության իրականացմանը:

- Աջակցում է գործազուրկների հաշվառման և զբաղվածության հետ կապված
խնդիրների լուծմանը, պետական կենսաթոշակների և նպաստների նշանակման
և վճարման աշխատանքներին, ապահովում մարզում ընտանեկան նպաստների,
միանվագ դրամական օգնությունների և կենսաթոշակների վճարումները:

- Կազմակերպում է մարզի բնակչության ցույց տրվող բուժկանխարգելիչ և
դեղորայքային օգնությունը, մոր և մանկան առողջության պահպանմանը
ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացումը:

- Զբաղվում է փախստականների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման
հարցերով և կատարում անհրաժեշտ վերլուծություն նրանց տեղաշարժի
վերաբերյալ:

- Առողջապահական հիմնարկների, ՍԾՏԳ - ների, զբաղվածության կենտրո-
նների, վիճակագրության, վերլուծության և պետ. ռեգիստրի, համապատասխ-
այլ կազմակերպությունների տվյալների հիման վրա իրականացնում է
տեղեկատու-վերլուծական գործունեություն:

3. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԳԻՍՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ
ՀԱՍՍՊՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.

- Պարբերաբար վերլուծում է մարզում տիրող առողջապահության և սոցիալական ապահովության ընդհանուր վիճակը, բացահայտում հրատապ հարցերը, մասին նախապատրաստում է առաջարկություններ վարչությունում և մարզպետ խորհրդակցությունում քննարկելու համար:
- Մասնակցում է մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային ծրագրերի նշակմանն ու դրանց կազմմանը:
- Իր իրավասությունների սահմաններում, օրենսդրությամբ սահմանված կարգով պարբերաբար ուսումնասիրություններ և ստուգումներ է կատարում մարզի տարածքում գործող առողջապահական և սոցիալական ապահովության հիմնարկ-ծեռնարկություններում, կազմակերպություններում:
- Մարզպետի որոշումների և հանձնարարականների կատարման ընթացքի մասին ժամանակին և սահմանված կարգով տեղեկացնում է մարզպետին, կազմ ստուգումների արդյունքներով նախապատրաստում և ներկայացնում անհրաժեշտ առաջարկություն:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- Վարչության մեջ ընդգրկված են հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.
- «Առողջապահության բաժին»:
- «Սոցիալական ապահովության բաժին»:
- Վարչության աշխատանքները ղեկավարում է վարչության պետը, որին աշխատանքի նշանակում և ազատում է մարզպետը՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով:
- Վարչության պետը պատասխանատվություն է կրում վարչության առջև դրված խնդիրների կատարման համար:
- Վարչության բաժինները ունեն բաժնի վարիչներ և մասնագետներ, որոնք աշխատանքի նշանակվում և ազատվում են օրենքով սահմանված կարգով:

Բաժինների վարիչները՝

- Գլխավորում և կազմակերպում են բաժինների գործունեությունը:
- Մարզպետարանի գործունեության կարգին համապատասխան ապահովում են մարզպետի քննարկմանը բաժնի կողմից հարցեր ներկայացնելու կարգի պահպանումը:
- Իրենց իրավասությունների սահմաններում բաժնի աշխատակիցներին տալիս են հանձնարարականներ, ցուցումներ և վերահսկում դրանց կատարմանը:
- Կատարում են բաժնի մասնագետների միջև պարտականությունների բաշխումը, ապահովում աշխատանքի կարգապահությունը և գործավարության սահմանված կարգով վարումը:
- Վարչությունը իրականացնում է նաև գործող օրենսդրությամբ, մարզպետարանի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ:

-Առողջապահության բաժինը գլխավորում է բաժնի վարիչը: Բաժնի վարիչը ունի տեղակալ, որը փոխարինում է բաժնի վարիչին նրա բացակայության դեպքում:

-Բաժնի կազմում ստեղծվում է բժշկական խորհուրդ, որը խորհրդակցական մարմին է: Խորհրդի կազմը հաստատում է մարզպետը: Խորհուրդը ունի կանոնադրություն, որը հաստատում է առողջապահության բաժնի վարիչը:

-Ելնելով անհրաժեշտությունից, բաժնի առաջարկությամբ, մարզպետի որոշումով պետական բուժփիմնարկների միջև սահմանված կարգով կատարվում է անշարժ գույքի, ավտոտրանսպորտի, բժշկական սարքավորումների վերաբաշխում հաշվեկշռից հաշվեկշիռ:

-Բաժնի վարիչի ներկայացմամբ, մարզպետի կարգադրությամբ առողջապահության ոլորտի հիմնարկների ղեկավարները ենթարկվում վարչական պատասխանատվության օրենսդրությամբ սահմանված կարգով:

-Բուժփիմնարկների տնօրեններին աշխատանքի նշանակելը և ազատելը կատարվում է մարզպետի կողմից՝ առողջապահության բաժնի ներկայացմամբ:

-Տնօրենների տեղակալների, գլխավոր մասնագետների, ստորաբաժանումների ղեկավարների, հաշվապահների աշխատանքի ընդունումը և ազատումը կատարվում է տնօրենների կողմից՝ համաձայնեցնելով առողջապահության բաժնի հետ:

-Բուժփիմնարկների և մյուս հիմնարկների ֆինանսատնտեսական պլանավորումը կատարվում է առողջապահության բաժնի կողմից:

- Բուժհիմնարկներում երիտասարդ մասնագետների աշխատանքի ընդունվելը կատարվում է առողջապահության բաժնի ուղեգրով:
- Բժիշկների և մյուս մասնագետների մասնագիտացումը, վերապատրաստումը կատարվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ առողջապահության բաժնի հայտերի հիման վրա:
- Բուժկանխարգելիչ և մյուս հիմնարկների հաստիքացուցանելու տարիֆիկացիաները, շինարարական-վերանորոգման աշխատանքներ և նախահաշիվները հաստատվում են առողջապահության բաժնի կողմից:
- Առողջապահության նախարարությանը ամենամյա հայտ է ներկայացնում կադրերի պահանջարկի մասին:
- Առողջապահության հիմնարկներից պահանջում է ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ բժշկական վիճակագրության, ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ:
- Պլանավորված կարգով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ, կազմակերպում է առողջապահական հիմնարկների կոմպլեքս և մասնակի ստուգումներ, որոնց արդյունքները քննարկվում են բաժնում, իսկ անհրաժեշտության դեպքում ներկայացվում մարզպետի քննարկմանը:
- Սահմանված կարգով ստեղծում է մասնագիտացված բաժանմունքներ՝ ստորաբաժանումներ, կաբինետներ, կենտրոններ:
- Կազմում է աշխատանքների տարեկան պլան, որը հաստատվում է մարզպետի կողմից:
- Քննության է առնում քաղաքացիների մամակները, դիմումները ու զանգատները:
- Վերահսկվում է ոչ պետական առողջապահական հաստատությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրությանը:
- Կազմակերպում և իրականացնում է հակահամաճարակային, կարանտինային, սանիտարա-հիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով:
- Կազմակերպում է մարզային ենթակայության առողջապահական հաստատությունների շենքերի կառուցումը, պահպանումը և շահագործումը:
- Մարզպետին առաջարկություն է ներկայացնում չեղյալ համարելու մարզային ենթակայության բուժհիմնարկների և ձեռնարկությունների ղեկավարներին՝ օրենսդրությանը հակասող հրամանները և կարգադրությունները:
- Առողջարկություն է ներկայացնում մարզպետին՝
- Առողջապահության բաժնի արտահաստիքային գլխավոր մասնագետ նշանակելու համար:

-Բուժկանխարգելիչ և մյուս հիմնարկներից շահագործման համար ոչ պիտանի ավտոմեքենաներ, մեխանիզմներ բարձր արժեքի գույք, սարքավորումներ սահմանված կարգով օտարելու համար:

-Սարգսյանի լիազորությամբ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կնքում է պայմանագրեր և կոորդինացնում մարզի համար մարդասիրական օգնությամբ ստացված դեղորայքի, սննդամթերքի, բուժսարքավորումների բաշխումը:

-Համակարգում է բարերարների և ծեռներեցների հատկացումների ճիշտ ներդրումը բուժհիմնարկներում:


- Կազմում է մարզի առողջապահության զարգացման հեռանկարային պլանի համաձայնեցնելով ՀՀ առողջապահության նախարարության և մյուս գերատեսչությունների հետ:

-Առողջապահական հիմնարկների ապահովում է կազմակերպչական-մեթոդական և գործնական օգնություն:

-Աջակցում է բուժհիմնարկներին՝ ներդնելու գիտության ու տեխնիկայի նորությունները, առաջավոր փորձը:

-Կազմակերպում է սեմինարների, գիտա-գործնական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, ժողովներ:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՐՁՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԿԱՆ ԱՊԱՀՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ  Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ